

ՄԱՍԻՍ

ՀԱՆԴԵՍ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՐԵՎ ՇԱՐԱԹՆ ԱՆԳԱՄ ՄԸ

ՏՆՕՐԷՆ
ՀՐԱՆՏ ԱՍՏՏՈՒՐ

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ
ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԳԱԳԻՆ
Պոլիս 20 ԴՐՈՂ
Գաւառներ 25
Օսար երկիրներ 6 Տրանք

ՀԱՍՅԷ

Ղալաթիա, Կէօզէ Օղլու Խան

ԱՎԷ ՄԱՌԻԱ

Բերայի մէջ հայ աղջկանց նախա-
կրթութեան յատուկ դպրոցի մը
չգոյութեան խնդիրը երեւան կուգայ
վերստին, դժբախտաբար այն կարգ-
մը խնդիրներուն ձեռով որք լրագրի
մը անձուկ էջերէն դուրս՝ մեռեալ
տառ կը մնան: Ժամանակ է որ այլ ևս
բոլոր ազգ. լրագիրք միացունեն իրենց
ձայնը և իրական արդիւնք մը ձեռք
բերել տալու աշխատին: Այս անգամ,
երիտասարդ պաշտօնակից մը հրապա-
րակ կը նետէ խնդիրը, նոյն բուն ու-
ճով քննադատելով «անապատ» ին
լքեալ ու խղճալի վիճակը, որով կը
գրուատէ «ուլասիա» ին բազմաշատ օ-
գուտները: Կը հաւատանք այդ գրուա-
տիքներուն ու սրտանց կը համակրինք
Համազգետաց վարժարանին՝ բայց այդ
կրթական հաստատութեան գոյու-
թիւնն անբաւական է ակնարկուած

թերին լրացնելու: Հարիւրներով կը
համրուին այսօր մեծ արուարձանին
մէջ հայ աղջիկներ որք ամենքն
ալ չեն կրնար դիմել կրթական այդ-
բարձր հաստատութիւնը, ուր բոլոր
ուսմունք օտար լեզուաւ կ'աւանդուին.
իրենց համար՝ մանկապարտէզի մը,
նախակրթարանի մը կամ դէթ կանո-
նաւոր ծաղկոցի մը պէտք կայ: Ատո՛ր
վրայ խորհելու է: Նուրեան էֆէնտին
Արուեստանոց մը հիմնեց. թո՛ղ իր
յաջորդներն ալ Աղջկանց նախակրթա-
րան մը բանան, և ա՛լ գանգատի տե-
ղի չի մնար:

* * *

Սպասելով այդ բարերար օրուան,
զիտէ՞ք թէ մեծ մասամբ ի՞նչ կրնեն
մեր մատաղատի աղջիկներն ի Բերա:
Կամ տունը կը մնան և կամ օտար
դպրոց կը յաճախեն: Ծանօթ անձնա-
ւորութիւն մը, որ երբեմն եղած է
կրթական ճիւղին վարչապետ, յաւե-
լով կըսէր թէ իր 10 - 12 տարեկան

աղջիկը անգլիացի օրիորդաց դպրոցը ղրկելու հարկադրուած է: Ինքը՝ բաւական նպաստաւոր գաղափար կազմած էր այդ վարժարանին վրայ. իսկ ի՞նչ ընեն այն ծնողքները որք «յայնկոյս Թագսիմի» — Բանկալթի — ընտկելով, Սիօնի Գոյրերուն կը դիմեն կամայ ակամայ: Եւ մտածել որ, եթէ Սէնդ-Էսթրիի հոյակապ չէնքին մէկ տասներորդէ՛ն ալ փոքր տուն մը գնուի կամ վարձուի այն կողմեր, հայ աղջկանց նախակրթութիւնը լատին մայրապետներուն յանձնելու պէտք չը պիտի մնայ: Օր մը, այդ փառաւոր վարժարանին դուռը զարնելու հետաքրքութիւնն ունեցայ. պատրուակը դիւրին էր, աշակերտուհիի մը ընդունելութեան պայմաններն իմանալ. մայրապետ մը առաջնորդեց զիս գէպի թաղոտառ: Բակը, գաւթիք, ոսկորներու դպրոց պաղ ազդեղութեամբ մաքուր ու փայլուն, լռիկ ու ամայի. իսկ խօսարանը՝ վանդակափեղկերով մթնցած սրահ մը. պատերէն՝ արբայներու պատկերներ, սեղանին վրայ՝ կրօնական գիրքեր. վանական օտար մթնոլորտ մը որ կը ճնշէր առաջին վայրկեանէն. դեր-տնօրինուհին եկաւ, քոյր Սելին: Փափագս յայտնեցի. իր անդրանիկ հարցումը սա եղաւ՝ առաջարկած աշակերտուհւոյս համար, «առնէնիէն Բարօրի»՞ ու առնէնիէն կռէկօրիէն»՞: Յետոյ ըսաւ թէ վարժարանին մատակարարութիւնը նեղ դրութեան մէջ ըլլալով, պարզ ցերեկօթիկ աշակերտուհի չէր ընդունուեր այլ ևս ու շատեր ճանբուած էին այս պատճառաւ, որոց մէջ կը գտնուէին Հայեր ալ. գիշերօթիկներու տարեվճարն էր 30 ոսկի, որուն վրայ կ'աւելնար 10 ոսկի դաշնակի, 5 ոսկի օտար լեզու-

ներու, 5 ոսկի գծագրութեան, 5 ոսկի մարմնամարզի, 5 ոսկի երգեցողութեան, 5 ոսկի լուացքի համար, մէկ ոսկի մտից տուրք, ու դեռ չեմ գիտեր ի՞նչ, այնպէս որ տարեվճարը կը հասներ աւելի քան եօթանասուն ոսկիի. այս գումարին մէջ չէին անկողնի, բժիշկի, դեղի, հանդերձի, և այլ ծախքեր գումարը չը կրցի ընել: Գոյր Սելին յարեց թէ *սքոլի-քանսիօնէոի* միջին դրութիւն մըն ալ կայ, զոր ընդունող աշակերտուհիք ցերեկը վարժարանին մէջ կը ճաշեն ու կը վճարեն տարեկան 25 ոսկի. եթէ մայրապետանոցին կառքովը երթեկեկ չ'ուզեն, 5 ոսկի պակաս: — «Շա՛տ է, քոյր իմ, խի՛ստ շատ, կը պատասխանէի. քանի՞ հայ աշակերտուհի ունիք» — «Քսանի չափ»:

Մինչև հոս, հետաքրքրական բան մը չիկար: Բայց քոյր Սելին իմացուց ինձ, թէ Սէնդ-Էսթրիի ետեւի կողմը, ընդարձակ պարտէզի մը մէջ, դեղեցիկ չէնք մըն ալ ունին որ երկսեռ նախակրթարանի կը ծառայէ, ուր զանազան ազգէ փոքրահասակ մանչեր ու աղջիկներ կ'ընդունուին և բաւական թուով Հայեր ալ կան: — «Ասո՞նք ի՞նչ կը վճարեն» — «Մեծ բան մը չէ, ամսական . . . վաթսուն փարա»: Կարծեցի թէ սխալ լսած եմ, — վասն զի մայրապետ մը չէր կրնար սուտ խօսիլ, — ու կրկնել տուի: Ճիշդ էր, վարսուն փարա: Խոստովանեցէ՛ք թէ նախնական դաստիարակութիւնն ընդհանրացնելու համար ասկից աւելին ընել կարելի չէր. այն դասակարգին համար, որ ամսական 5 կամ 2½ ոսկի չէր կրնար վճարել, ձրիավարժի մօտ դպրոց մըն ալ հաստատուէին գթութեան այդ ճշմարիտ քոյրերը,

որք ամսական վաթսուն փարայով կը
դաստիարակէին մե՛ր ալ աղջիկները:

* * *

Այս տեսակցութենէն ետք, հե-
տամուտ եղայ գտնելու այս վերջին-
ներէ մի քանին: Ակամայ ուսումնա-
սիրութիւն մը կատարելու մղուած էի.
վերջապէս բարեկամ ընտանիքի մը
մէջ գտայ այդ երջանիկ աշակերտու-
հիւններէն երկուքը: Քանի մը ամսուան
մէջ սկսած էին արդէն գաղիերէն
պարբերութիւններ թոթովել. գոց գի-
տէին գաղիերէն «Հայր մեր» ե ու-
րիշ աղօթքներ. — «Քրիստոնէականի
դաս կուտա՞ն» : Պատասխան չկայ . . :
Լոյս մը կը ծագի մտքիս մէջ: —
«Քաթեչիզմ կը սորվի՞ք, աղջիկս» : —
«Հապա՛, ինչպէ՞ս չէ» կը գոչեն ու-
րախութեամբ ու կ'սկսին թութակի
պէս արտասանել հարց ու պատաս-
խանները: Մեծը, որ տասներկու տա-
րեկան է, մանկական հպարտութեամբ
ցոյց կուտայ ինձ սիրուն համրիչ մը
զոր մնաւ յետոյ նուիրած է: Ու կ'սկսի
նկարագրել թէ ինչ ուրախութեամբ
ամեն կիրակի առաւօտ Գաղիացոց
եկեղեցին կերթան, ուր վերնատունը,
երգեհոնին մօտիկ, ծնրադիր կը մնան
երկու ժամ՝ «ձայնաւոր ու թիւ պա-
տարագ» տեսնելու. իրիկուան նորէն
կ'երթան ժամերգութեան:

— Աղօթք ալ կ'ըսէ՞ք, աղջիկս:

— Ինչպէ՞ս չէ. այս համրիչը անոր
համար է. յիսուն անգամ Այլե՛ Մա-
ռիս կըսենք առաւօտուն. յիսուն ալ
իրիկունը:

— Լատիներէ՞ն ալ, հէ՞, ագոր չեմ
հաւատար:

— Կուզէ՞ք նէ ըսենք . . .

Ու երկուքը մէկանց կ'սկսին ար-
տասանել:

Այլե՛ Մառիս,

Ողջո՞ւ եղ Մառիս

Ի տես այս երկու սիրուն հայ աղ-
ջիկներուն, որք աչքերնին վեր սեւե-
ռած, ձեռքերնին իրարու կցած, ի-
րենց մատաղ տարիքին բոլոր զգա-
յուն շեշտերը ու անմեղունակ բարե-
պաշտութիւնը կը դնէին լատիներէն
աղօթքի մը արտասանութեան մէջ,
միտքս կը բերէի մեր տղայութեան
օրերը — ոչ շատ առաջ, տասը տաս-
ներհինգ տարի, — երբ ամեն առաւօտ
դասի սկսելէ առաջ, «Առաւօտ լուսոյ»
կ'երգէինք, ու իրիկունները «Հաւա-
տով խոստովանիմ» : Շաբաթ իրիկուն-
ները, վարժապետնիս եկեղեցի կ'ա-
ռաջնորդէր զմեզ խմբովին, ու տօնա-
կան օրերուն, պանդուխտ քահանան
դպրոց կուգար բոլոր աշակերտները
խոստովանցնելու: Այն հոգեկան հըր-
ճուանքը զոր կ'զգայինք այդ կրօնա-
կան պարտաւորութեանց կատարմամբ,
հիմակուաններէ ոմանք հարկադրու-
ած են զգալ Այլե՛ Մառիսն արտա-
սանելով: Մայրապետներուն ըսելիք
չունինք. անոնք իրենց գործը կը կա-
տարեն. ծնողքներն ալ մեղադրելի չեն
այնքան, քանի որ հարկադրուած
են օտար կրթութիւն մը տալ իրենց
զաւակներուն, եթէ չեն ուզեր անուս
ու անկիրթ թողուլ զանոնք. որո՞ւնն
է ուրեմն յանցանքը. . . :

Յանցաւորը փնտռելու ժամանակ
չէ, այլ դարմանը: Եւ դարմանը շատ
պարզ է ու շատ դիւրին. Բերայի ու
Բանկայթիի մէջ մէկ երկու մանկա-
պարտէզ կամ նախակրթարան բանալ
աղքատիկ հայ աղջկանց համար: Թո՛ղ
Այլե՛ Մառիսն խթան մը ըլլայ այս
կրթական պէտքին լրացման:

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԱՉԵՐԸ

Առ Գառնիկ Ֆեզգլեան

Երազ մը տեսայ, երազ անտուր,
Թանձր ամպի մը տակ, տհեղ, տհաւոր,
Տեսայ անհամար և անթիւ աչեր,
Լէշեր խառն ի խուռն, աչեր ցիր ու ցան
Որք խոր խաւարին մէջ ինձ երեցան
Պլպլուռն լուսով մ'որ կը դողդոջէր:

Աչեր կապոյտ, գողտր ու խարտեաշ կուտի,
Ոյց մէջէն կարծես ծածկ մը կը հոսի
Երկնագոյն վրձիտ ալեօքն անդորրիկ,
Աչեր սև, աչեր սուր՝ թուխ աղջրկան,
Սև՝ գիշերց պէս ուր չիլէ լուսնիկան,
Գիշերց՝ ուր գուռն շանթն ու փոթորիկ:

Այլք՝ գորշ ու տարտամ երանգով տարբեր,
Գոյնով ցուրտ ձմրան երկնից ձիւնաբեր,
Թաց ակնարկներովն տրամութեան, ցաւի .
Եւ այլք, յարաշարժ թաւայուն բիբեր,
Հէշտ պատկերներու տեսլանն անհամբեր
Փայլէին, աչեր մոխրագոյն, ծաւի . . .

Եւ այս աչերու՝ վառվառ թէ ազօտ՝
Չմոռխտ ու սև սաթ թէ շողակ շողոտ՝
Ինձ ուղղուէին նայուածքներն տմէն .
Ոմանք տարփատենչ, այլք գգուանօք լի
Կամ՝ մեղկ, կամ՝ հեգնոտ, կամ՝ ցուրտ սոսկալի՝
Աչեր որք սրտէն արիւն կը քամեն . . .

Եւ մինչ շնչասպառ, յուզմամբ անսահման,
Կ'ապասէի լուռ՝ արձանի նըման,
Ձայն մը լիսեցի բարձր, հնչուն, հատու,
Որ ըսաւ. «Կ'ուզե՞ս, վշտալից հագի,
«Որ ժպտի քեզ ցոյն, ու ցաւդ ամոքի,
«Այս աչաց մէջէն զոյգ մ'ընտրէ ա՛ռ գու .»

«Կ'ուզե՞ս քաղցր աչեր կուսանաց մտքուր
«Ուր ցուլայ Սիրոյ նորարարութե հուր,
«Աչեր՝ ո՞ր պատրանք դեռ ունեցած չեն .
«Կամ կ'ուզե՞ս աչեր հարձի, գուսանի,
«Ոյց մէջ սիրան հեշտիւ լողալ կ'ուսանի,
«Մինչ մարմինն հիւծի կրրից մարմնօջէն . . .»

«Կամ կ'ուզե՞ս աչեր որոնք յամառին
«Կեանքն հոտաւետող սիրոյ բուրվառին
«Ուրանալ հըմայքն ու գեղն անպատում .
«Կամ ա՛յն աչերն որք չեն ըզգար ըրնաւ,
«Անլաց, անժպտի, թէ՛ չոր թէ խոնաւ,
«Ո՛չ ուրախ ըլլալ գիտեն, ո՛չ տրտում . . .»

Այդ փայլումին մէջ աչաց տեսլային՝
Երկու գողտր աչեր դառնապէս լային
Լայիւնն անրողորջ, անձաղիկ ծառի .
Արցունք, զերդ վրտակ որ դիմէ ի ծով,
Հոսէին անհունն այլ լուռ թախիծով . . .
— Այն արտասուածք որ աչերն ես առի:

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆԻ ՄԱՆԸ (I)

1872 Յունվար 21 ի հինգշաբթի է ուրբաթ լուսնալու գիշերը, Պետրոս Դուրեան կը մեռնի, եղական, արտասովոր, զմայլելի մահով մը, միշտ իւր խորհրդանշան, իւր գերագոյն իսկութեամբ արարած մը, մահ մը որ կատարեալ քերթուած մըն է, ամենէն քնարերգականը, ամենէն խորինը, ամենէն տխուրը, ամենէն ուժգինը եւ ամենէն լայնը զոր արտադրած է :

Այդ աղետալի գիշերէն երեք օր առաջ, երազ մը կը տեսնէ : Երեք քահանայներ կ'երեւան իրեն որք զինքը հարոնիքի կը հրաւիրեն : Եւ մահու անկողին մէջ, հիւանդը կը մեկնէ տխուր ժպտով մը այդ հարոնիքը որ վերը պիտի կատարուի : Տարօրինակ զուգադիպութեամբ մը իւր յուզարկաւորութեան երեք քահանայներ ներկայ կը գտնուին :

Պզտիկ Միհրանն ալ մահուան գիշերը երազ մը կ'ունենայ, ոչ նուազ խորհրդաւոր. կը տեսնէ Պետրոսը որ իւր պարսկական շալը ուսերուն առած կուգայ դանդաջելով դէպի տուն : Միհրան քար մը կը նետէ անոր. «Ինչո՞ւ զինովի պէս կը քայես» : Եւ ահա Պետրոսը կապոյտ աչքերով կնոջ մը կը փոխուի որ վերմակներու առջեւ կ'երկրպագէ :

Առջի իրիկունէն ծնողքն, ազգականները եւ բարեկամները, որոնց մէջ է Ճանֆէս-ճեանը, հաւաքուած են հիւանդին անկողնին շուրջը : Դուրեան բաւական հանգիստ է. կը խօսի հանդարտօրէն եւ առանց տանջուելու : Ծնողքը կը կարծեն թէ հիւանդութիւնը թեթեւալ սկսած է. եւ նոյն իսկ խօսք կ'ընեն որ գարնան «ինչ ընեն չընեն Պետրոսը Ալէմաղլի տանն քիչ մը առնեն» :

Անկիւն մը, երկու պզտիկները, Միհրանիկը եւ Ագրիպասը, թուղթի վրայ եկեղեցիի պատկերներ գծելով կը զբաղին, խօսելով իրարու հետ. «Ազօթողը ի՞նչ կ'ըսէ», կը հարցնէ մէկը միւսին : Դուրեան կը լսէ հարցումը, եւ կրօնական խանդավառութեամբ

մը յանկարծ բորբոքած, երկարօրէն կը պատասխանէ անոնց. «Անիկա Աստուծոյ յաւիտենական փառքը կ'երգէ, այն Աստուծոյն որ . . . » եւ բանաստեղծն իր երեւակայութիւնն ու իր հրեղէն բացատրութիւններն անգամ մըն ալ կը թափէ օրհնելու եւ փառաբանելու համար Ամենակալը :

Դիշերը բաւական նստելէ յետոյ կը բաժնուին : Ճանֆէսճեան իր տունը կ'երթայ : Ամէնքը վար կ'իջնեն : Պետրոս կ'աղաչէ հօրը որ իր սենեակը պառկի : Բայց միւս պզտիկ եղբայրները որոնց քով կը պառկէր հայրիկը, թող չեն տար ըսելով որ «կը վախնան մուկերէն» :

Գիշերուան ժամը 9ին, Դուրեան ձայն կը բարձրացնէ. «Աղապա՛, եկուր :» Հայրը կը վազէ վեր. «Դարձուր դիտ», կ'աղաղակէ հիւանդը : Եւ երբ հայրը կը դարձնէ զայն միւս կողմին վրայ, «Օ՛խ», կ'ընէ Պետրոսը գոհունակութեան հառաչով մը, կարծես թէ անդիի աշխարհը գացի եկայ :

Յետոյ ուրիշ փափաք մը. «Հաճէն թող վեր գայ» : Հաճէն իր Յարութիւն եղբայրն է որ սղայութեանը Երուսաղէմ գացած էր հօրը հետ. բայց մօրաքոյրը, որ դեռ այդ տարին գացած էր Ս. քաղաքն ու նոր դարձած էր, կը լսէ, եւ կռահելով որ հիւանդին վիճակը ծանր է, չուզեր արթնցնել Յարութիւնը, ու ինք կը փութայ Պետրոսին քով : Օրհասականը, կարծելով որ եղբայրն է իր քովը, կը բռնէ անոր ձեռքը եւ կը մրմնջէ. «Դուն Երուսաղէմ գացիր, ես վերին Նիւստաղէմ կ'երթամ. դուն Փրկչին պաշտած տեղերը տեսար, ես զինքը պիտի տեսնեմ» : Կամաց կամաց բոլոր տնեցիք կ'արթննան, եւ ահա շրջանակը կը կազմուի նորէն անկողին շուրջիք : Պետրոս ամէնուն վրայ կը պաշտօնէ իր մարած նայուածքը, ու նշմարելով Յարութիւնը, կ'ըսէ անոր. «Եղբայրս, քանի մը կտոր բան զրեր եմ, նայէ՛ որ հրատարակուին, չեմ ուզեր որ կորսուի յիշատակս» : Ապա խնդալով կ'աւելցնէ. «Վարդուէ՛, եղբայրս, Խօճալ Խօճալ զաւակներ ունեցիր, ու անոնց ըսէ որ մէկ ասանկ հօրեղբայր մը ունեցան, ես ալ երկնքէն ձեր վրայ նայեմ» :

Քիչ մը լռութենէ յետոյ, հիւանդը փափաք կը յայտնէ որ Ճանֆէսճեանը կանչեն :

(1) Արշակ Զօպանեան մեզ կը դրկէ հետեւեալ հատուածն իր Դուրեանի վրայ ուսումնասիրութեանէն :

Գիշերով Միհրանն ու Ագրիպան լապտեր կը վառեն կ'երթան տունէն կ'արթնցնեն կը բերեն Ճանֆէսճեանը : Զայն տեսածին պէս կը ժպտի հիւանդը ու կ'ըսէ . « Եկուր, քեզի կը սպասեմ կոր մեռնելու համար : Գիտե՞ս, վրաս եօթը զլուխ Աւետարան կարգալ տուի, դուն ալ պիտի խնդաս : » Ու կը խնդայ այս խօսքին : Ապա կ'աւելցնէ տրտմութեամբ . « Ես չէի գիտեր որ մահը ասանկ չուտ պիտի գայ : »

Յետոյ, ամէնուն գառնալով, « Ալ Պետրոս չիկայ, Պետրոսը ասիկայ է ասկէ ետքը » . եւ Ճանֆէսճեանը ցոյց կուտայ :

Այնուհետեւ կ'ըսէ . « Մէկը պիտի գայ, բարեւներս տուէ՛ք անոր : » Այդ ճէ՛կը հաւանականաբար Տիգրան Աղամանն է զոր հիւանդը երկու տարիէ ի վեր չէր տեսած եւ որ թաղման իրիկունը հասաւ :

« Թաղումս, կ'ըսէ հիւանդը, փառաւոր հանդէսով ըլլայ, անանկ կ'ուզեմ . բոլոր բարեկամներս գան զիս տեսնեն . մինչեւ կիրակի պահեցէք մարմինս : Մի՛ վախճաք, չհօտիր, ոսկոր մը Խէրէ մը մնացեր է : Իրաւ, ես բան պիտի չլմանամ, բայց անանկ կ'ուզեմ որ ըլլայ : »

Իր չգոհացուած փառասիրութիւնն ու իր մոռցուելու վախն էին որ իր վերջին պահուն զեռ զինքը կը տանջէին :

Մօրաքոյրը, մահուան գաղափարը վանելու համար անոր մօքէն, մրգեղէններ կը բերէ անոր : « Առէ՛ք, առէ՛ք », կը հծծէ Դուրեան : Քովինները նախ մրգեղէններուն համար կը կարծեն . եւ ապա կը հասկընան որ հոգիին համար է :

Յետոյ, նորէն նայուածքը կը պտըտցնէ ամէնուն վրայ, ու կ'ըսէ . « Ամէնքդ ալ աչքիս աղուոր կ'երեւաք կոր, շատ աղուոր կ'երեւաք կոր : »

Այդ միջոցին, մօրաքոյրը Երուսաղէմէն բերած կնդրուկէն քիչ մը կրակը կը նետէ : Դուրեան, անուշ հոտերը առնելով . « Ան ի՞նչ հոտ է, կ'ըսէ, ո՞վ ձգեց ատ հոտերը, ձգեցէք, ձգեցէք, ես կը սիրեմ ատ հոտերը : »

Եւ այսպէս ամէն բանի վրայ կը խօսի, ամէն տպաւորութիւն կ'արտայայտէ, ամէն խոհ որ իր ուղեղին մէջ կը փթթի՝ դուրս կը թափէ . մինչեւ առտու, 4-5 ժամ

անդադար կը խօսի, իր անկողնին վրայէն, կարծես բազինի մը, խարոյկի մը կամ եռոտանիի մը վրայէն, իր բարեկամներուն եւ ազգակիցներուն, որք ցաւով, զմայլանքով ու ապշութեամբ լեցուած, մտիկ կ'ընեն . Եւ երբ կը զգայ որ ա՛լ հասած են բոլոր ուժերը, կը լռէ :

Առտուն մօտ, հօրեղբայրը կուգայ : Ներս մտած ատեն դուռը կը ճռնչէ . Պետրոս ճիգով մը այն կողմ կը դարձնէ նայուածքը, ծուռ նայուածք մը, արդէն պաղ, որ կը հետեւի անոր, մինչեւ որ իր անկողնին կը մօտենայ . առաջին անգամ չճանչնար դայն . Հօրեղբայրը բազմոցին վրայ կը նստի . Պետրոս, միշտ անձայն, կը նայի նորէն անոր, եւ այս անգամ կը ժպտի ի նշան ճանաչողութեան, բայց միշտ անձայն . « Ինչո՞ւ չխօսիր, կը հարցնէ հօրեղբայրը . » Մայրը կը կրկնէ . « Չխօսի՞ս, Պետրոս, հօրեղբայրդ եկաւ : »

— « Ժամանակ չունիմ, » կը մրմնայ հոգեւարն ակռաներուն մէջէն : Եւ այս կ'ըլլայ իր վերջին խօսքը : Յետոյ աչքերը կը փակուին, գլուխը զոր քիչ մը վեր առած էր հօրեղբորը եկած ատեն, բարձին վերայ կ'իյնայ : Ալ կատարեւապէս սպառած, խօսելու անկարող, նայելու անկարող, Պետրոս շարժումով իր վերջին մնաք բարովը կ'ըսէ, ձեռքը երեք անգամ ճակտին տանելով հանդարտօրէն : Երրորդ շարժումն առկախ կը մնայ օդին մէջ :

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ

ԱՆԾԱՆՈԹ ԴԵՄՔԵՐ

ՏՈՔԹՈՐ ԳԱՐՐԻԷԼ ՍԵՒԵԱՆ

Գլուխը՝ ձախին ծնած քիչ մը, միջահասակ մարդ, որ իր շարժումներուն ծայրայեղ ժուժկալութեամբը, անշարժութեան կը մօտենայ եւ իր սովորական կեցուածքին անսովոր ձեւով՝ խանձարուրին մէջ մոռցուած ու հոն ծերացած երախայի մը նմանութիւնը կը բերէ :

Տոբթոր Գաբրիէլ Սեւեան՝ Վենետիկէն հոս եկող այն ոտանաւոր գրողներու սերունդին չվերաբերիր որուն ճիշդ համրանքը ընել անկարելի է եւ որոնցմէ սակայն Պէշիկիթաշեան, Թէրզեան ու Աճէմեան միայն յաջողած են մեր մէջ :

Ա՛լ աւելի հին , աւելի լուրջ, եւ աւելի բարձր դասի մը կը պատկանի . իր տեղը՝ Վիէննացի լեզուաբաններուն , Այտրնեանի , Քաթրճեանի , Քարաքաչի եւ այլոց քովն է , որոնցմէ շատերը լրութեանը մէջ ամփոփուած մնացեր էին , իրենց գիտնական զբաղարարէտի ծանրութեանէն չի բաժնուելով ու վախճալով խառնուիլ բազմութեան մը որ, իրենց աչքին, բարեկենդանի մը դիմակաւորներուն երեւոյթը ունէր :

Այսպէս լրած ու լքուած կը մնային միշտ . եւ երբ անոնցմէ մին յանկարծ նորէն կ'երեւայ գրական ասպարէզին վրայ, յարուցեալի մը ազդեցութիւնը կ'ընէ վրանիս կամ վրէժխնդիր ոգիի մը՝ որ նորերուն անպատկառ քրթմնջիւններուն ու ծիծաղներուն մէջ չի չիտթիր եւ իր կշտամբանքով լեցուն դասերը կուտայ առանց մէկի մը խնայելու :

* * *

Յարուցեալ մը, այո՛, որ գուցէ այդ պատճառով, գիտակցաբար կը խօսի անոր վրայ՝ զոր մենք մեռեալ կ'անուանենք :

Անոր քովէն կուգայ աղէկ ու ոխնտ ըլլալուն լուրը եւ մերձաւոր վերադարձի մը աւետիսը կը բերէ մեզի Տոբթոր Սեւեան, որ, իր արուեստին ուսուցածին հակառակ, վերականգնութեան կը հաւատայ :

Ու գիտէին վրայ ծռած , չփելով երակները, օրէ օր չլքելի շիշը մօտեցուցած ունեւորուն, արուեստական շնչառութիւն մը ընել տալու ասպարիւն ջանքերով, թմրած սառած անդամները ճգնելով տաքցնել իր շունչովն իսկ , այս բժիշկը Գրաբարին զլիսուն վերեւ կը հակէ սիրելիի մը մահուան չի համոզուող մարդու յամառ պատրանքին մէջ :

Կը կարծեմ որ դահիճի, անգութ ու անողորմ մարդու գործ է մեր ըրածը, քաշելով զինքը հեռու այս անկենդան մարմնին քովէն, պոռայով, կրկնելով շարունակ անոր երեսն ի վեր որ զայն թաղելէ եւ անոր եր-

կիւղած յիշատակը պահելէ դատ բան չիկայ ընելիք այսուհետեւ այդ մարմնին համար :

Տոբթոր Սեւեանի գրական դաւանանքը համոզումէ աւելի վեր բան մը , հաւատք մըն է գրեթէ . չէնք մը՝ որուն հաստատութիւնը իր տկարութեանը մէջ կը կայանայ քան թէ իր իսկական զօրութեանը , ճիշդ այն ծաղկին նման որ իր տխրոյթ ու քնքուշ կազմուածքով՝ փայտայանքի ու զգուանքի միայն կոչում կ'ընայ ընել ու չի կրնար հրաւիրել իր վրայ կացինի հարուածները ու լոնք հաստ ու բիրտ ծառերու կոճղին , — գիտնական ապացուցութիւններու, — սահմանուած կը մնան :

Իրաւունք չունի ուրեմն նետելու այդ ծաղիկը գրական կրկեսին մէջ, ուր կոխկըտուածքը պակաս չէ եւ ուր մրցող տղաք՝ պայքարին ջերմութեան մէջ, չի զանաղանհն թերեւս այդ անզօր բոյսը իրարու զլիսու նետուած փայտի կտորներէն ու ճղման առանց ուղեւոր :

* * *

Ամենէն չահեկանն այն է որ տարիները չեն կրցած ցրտացնել կամ ամոքել իր դիւրագրգիւ ու պահանջող բնաւորութիւնը :

Գրաբարի սիրուն յարուցած վէճին մէջ միեւնոյն մարդը կը գտնենք նորէն , առջի անհամբեր երիտասարդը, որ հինգ վայրկեանի սպասումէն ձանձրացած, կը պոռար ու եւ է աղջկան մը երեսին ,

Կա՛մ յոյս տուր կամ խիստ վեճիւ տուր յետին .

« Քսակդ կամ կեանքդ » ըսելու պէս բան մը :

Այո կամ ոչի մարդն է կտրուկ, զայրացկոտ, գրեթէ երախան անփոփոխ իր գիրքին ու իր ճշող պահանջումներուն մէջ :

Այս եռանդը ու կորովը, զոր տարիներուն զիզած ձիւնը չէ կրցած մարել, կը զմայլեցնէ գիտ . ամբողջ քերթուած մը կը տեսնեմ հոն :

Իսկ ինչ որ օրինակելի է այդ կեանքին մէջ , ինչ որ երբեք ուղածիս չափ ստէպ առիթ չի պիտի գտնեմ ըսելու հիմակուան տղոց, մեր գրականութեան համար ցոյց տրուած այն հոգածութիւնն ու սէրն է որ Տոբթոր Սեւեանի եւ անոր բոլոր դասակից-

ներուն ու ժամանակակիցներուն մէջ ան-
վրէպ կը տեսնուի, սէր՝ զոր կեանքի
պայքարը, մարդուն անհատական ձախոր-
դութիւնները, եւ որ աւելին է, յաջողու-
թիւնները չեն կրնար մոռցնել տալ կամ
մէկդի նետել:

* * *

Տօքթոր Սեւեան այս օրերս Արեւելի
մէջ հրատարակելով կէս դար առաջ գրուած
իր քերթուածները, իր բանաստեղծական
եղանակէն նմոյշ մը կուտայ մեզի: Զար-
մանալի՝ բան. ինքը՝ որ համամիտ մէկը չէ
բնապաշտ դարոցին, անոր աշակերտածի պէս
բաներ մը նշմարել կուտայ հոն. անշուշտ
իրական, շատ իրական պատկեր մըն է այն
որ հետեւեալ տողերուն մէջ կը ներկայա-
ցուի,

Մարմնոյն պարարտ ձեւերուն
կազմած ելեէջներուն .

Բնապաշտ մըն է ինքն ալ ուրեմն առանց
զիտնալու, եւ ճիշդ այն վտանգաւոր ցան-
կութեան հովերով տարուբեր, որմէ այն-
քան կը խորշի հիմայ:

Կը կարծենք որ Քաղիւլ Մէնտէս կամ
Արման Սիլվէսթր ցնծութեամբ պիտի ստո-
րագրէին իր տաղերը:

Բնապաշտ ձեւին դէմ գաղափարի յեղա-
շրջումը յապաղած կը թուի յարգելի բժշկին
մտքին մէջ. ասկից ներելի է հետեւցնել թէ
ախտաբորբօք գրականութենէ մը ցոյց տըր-
ուած խորշումը, — իրեւ պարզ բնախօսա-
կան երեւոյթ, — մասնաւորապէս այն տա-
րիքին մէջ երեւան կ'ելլէ ուր մարմնոյ պա-
րարտ յնւերուն կազմած ելեէջները անօգուտ բոր-
բոքումէ զատ ոչինչ կրնան արթնցնել: Հա՛րկ
է արդեօք գրական պարկեշտութիւնը սահ-
մանել իրեւ էապէս յարափոփոխ բան մը
որ տարիքներու, հասակներու ենթական
ըլլայ, անոնց աւելնալուն կամ պակսելուն
հետ աճի կամ նուազի եւ անհունական հաշ-
ւոյ խնդիր մը ձեւացնէ այսուհետեւ,

$$f(x) = 0$$

* * *

Տօքթոր Սեւեան երկդիմութեանց ու

վարանումի մարդ չէ: Այն նեղսիրտ հաւա-
պեալն պէս, որ Միջերկրականէն Ստան-
տեան Ովկիանոս անցնելու համար ձկնալ-
թարի նեղուցը երկար բարակ փնտռելու
նեղութիւնը յանձն չառնելով, լաւագոյն
սեպած էր Ափրիկեան ծովեզերքին վրայ
խրել տալ իր նաւը, Տօքթ. Սեւեան, որ իր
առաջին ուղեւորութիւնը այդ նաւին վրայ
ըրած է, լեզուի խեղիւրներու մէջ համբերա-
տար քննութիւններէ, աջը ձախը զննելէ հե-
ռանալով՝ նախամեծար կը համարի զրարարին
վրայ նետուիլ ու հոն կառչած մնալ հաստա-
տամիտ ոստիկէի մը պէս:

Ու կը խորհիմ որ իրաւունք ունին թե-
րեւս անոնք, որ չը սիրելով մեր հողմակո-
ծիկ տերեւի ճակատագիրը, անգտանելի
ճշմարտութեան մը պատրանքէն չի բռնը-
ւելով, անկորուստ կը պահեն ամեն բանի
մէջ իրենց միամիտ ու վաղնջական զաղա-
փարները:

Իրաւունք ունին:

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ

ՌՈՒՍԻՆԵԱՆ

Իւ կեանքն ու գործերը

Բ.

1858 — 1870

Ռուսինեանի Ռուսահայաստանի հաւա-
նում չգտաւ: Թէեւ ինք, որ նոյն թուա-
կանին ուսումնական ժողովի անդամ էր,
ջանաց իր ազդեցութիւնն ի գործ դնել,
որպէս զի ընդունել տայ իր լեզուական փո-
փոխութիւններն ազգային վարժարաններու
մէջ եւ մինչեւ իսկ քանի մը դպրոցներու
դասատուները համոզեց այդ մասին, ուս-
կայն ի վերջոյ Հոգեւոր եւ Աշխարհական
ժողովներու որոշմամբ արգիւտեցաւ այդ
քերականութեան գործածութիւնը: Տարի
մը ետքը, 54ին, Ռուսինեան հրատարա-
կեց Տարեցոյց անուամբ տետրակ մը, ա-
ռանց իր անունին, որով կ'ուզէր այս ան-
գամ ալ մեր տօմարը բարեկարգել: Այս
նոր փորձն ալ անյաջող գնաց եւ այս ան-

գամ Պատրիարքարանը հարկ դատեց միջամտել եւ յայտարարութեամբ մը, զոր Մասիս հրատարակեց, արգիլեց այդ տարեցոյցի գործածութիւնը զպրոցներու մէջ, ինչպէս նաեւ քարէսէր հասարակութեան:

Ռուսինեան Տաբէցոյց մըն ալ 1872 ին հրատարակեց, նախորդին ձեւով: Հոս կը գնենք իբրեւ հետաքրքրական եւ սիրուն գիւտ մը, իր յօրինած բնական ամփոններու անունները: Զեւեբ, Սաւեբ, Մրբեբ, Զարբեբ, Մաղիբ, Մաբբեբ, Հեյբ, Տեբբ, Մրբբ, Կիւբ, Թաւեբ, Միբեբ: Ֆապրը տիկլանդին եթէ հայ ըլլար ասիէ լաւը չպիտի կրնար գտնել: Բացի օրացոյցէն, 72 ի Տաբէցոյցը կը պարունակէ նաեւ մշակութեան, ժամանակագրութեան, վիճակագրութեան, տարեւաշխուհեան եւ երկնաբանութեան վրայ ընդարձակ տեղեկութիւններ ու գողտրիկ թարգմանութիւններ վ. Հիւկոյի եւ Լամառթիւնի մէկ քանի քերթումներուն:

Նորոգման այդ երկու փորձերու, լեզուի եւ տօմարի, ձախողանքը զինք կասեցուց ուրիշ հիմնական եւ հնարաւոր նորոգմանց աշխատելէ, որոնց մասին աւելի բաւականութեամբ եղաւ, շնորհիւ իրեն աշակից եւ իրեն նման կարող ու խիզախ անձերու: Արդէն Ռուսինեանի համար չէր վատիլ բոլոր:

Իր կեանքին ամէնէն գործն ժամանակին է 50 էն 60 եղած միջոցը: Այն ատենները կը փնտռէր անշուշտ 16 ին՝ երբ Օտեանի կը գրէր. «Ո՛ւր էն այն օրէրը որք զիշեր կ'ըլլային եւ այն գիշերները որ տիւ կ'ըլլային եւ զեռ մեր խօսքէրը չ'էին սպառէր:» Եւ այդ աշխատանքի ու խօսակցութեան բոլորով ման մէջ Ռուսինեան կը մոռնար ամէն բան, ընտանիքն. ու հիւանդները: Իւսկիւսար, երբ հիւանդի մը տանելու կուգային, կը բարկանար ու անխնայ կը ճամբէր զինք տանելու եկողը:

Պատմենք հոս իր ներքին կեանքէն երկու դէպքեր որոնք ցոյց կուտան Ռուսինեանի արտակերպուն անտարբերութիւնն իր անձին կամ ընտանիքին պատկանող բաներու մասին:

Երբ մայրը հիւանդ եղաւ, բնաւ բժիշկ բերել չտուաւ եւ մեռած ժամանակն ալ, առանց ծանուցումի, լոկ քահանայով մը տարաւ թաղեց, ինք առանձին միակ յու-

ղարկաւորն ըլլալով: Միայն երբ իր բարեկամները լուր հարցուցին մօրն առողջութեան վրայ, այն ատեն պատասխանեց. — «Հա՛, մեռաւ խեղճը, տարի թաղեցի:» Որ թաղէօյ բնակած միջոցին գիշեր մը հըրդեհ կը ծագի իրենց փողոցի ծայրը. կիւն ահարեկ կը վազէ երկանը քով որ էմէ-Մարթէնը կը թարգմանէր. — «Է՛, Ի՞նչ կայ, կը գոչէ Ռուսինեան, տակաւին քովի տունը չորընկեցաւ. » Ու կը շարունակէ Մաբբեբ-Դասարակութեան թարգմանութիւնը: Ծերենց (Տօք. Շիշմանեան) իր առ վերոյր ուղղած մէկ թղթակցութեան մէջ, ուր կը խօսի Ռուսինեանի վրայ, երանելի կը գտնէ այդ հողոյ անխռովութիւնը: «Եւրանելի Արքիմեդէաներն են եւ եղած են միշտ որ երբ աշխարհք կը տագնապի՝ կը տատանի, իրենք իրենց ուսմանց եւ խորհրդածութեանց մէջ անդրգոսելի եւ անխռով կը փայլին եւ ցուրտ փիլիսոփայութեամբ ոչ յաջ ու ոչ ձախ նայիլ արժան կը համարին: Եւ այս մարդիկներէն մէկը կըրնար զրուցուիլ Տօքթօր Ռուսինեան, զոր քու Նախնայիք Եանսիւնուր կ'անուանէր եւ շատ զեղեցիկ կ'նկարագրէր (1): Մենք ըսել չենք ուղեր թէ Ռուսինեան եւ Արքիմեդէ հանձարի զուգակշիռ մը կը կազմեն, ո՛չ, այլ հողոյն անխռովութեան մասին է մեր խօսքը:»

Բայց ամէն պարագայի մէջ ցուրտ փիլիսոփայութիւն եւ հողոյ անխռովութիւն չեն կրնար բաւել, եւ Ռուսինեան որ ունեւոր մէկը չէր, իր ընտանեկան կեանքի մասին ունեցած անհոգութեամբ շատ թշուառ պիտի ըլլար, եթէ ազնիւ բարեկամներ չունենար իրեն խրատատու եւ ձեռնտու, ինչպէս Պալեաններն ու Օսմանեան աւագանիին մէջէն Ֆուաթ փաշա որուն անձնական բժիշկն էր եւ որուն ընկերացած էր Պէրութ 1860 ին:

(1) Վերջը (Մ. Մամուրեան) իր Նախնայիքն մէջ խօսելով Եանսիւնուրի վրայ ի վերջը կ'ըսէ. «Բայց ինչ որ է, պատմութիւնը չպիտի մոռնայ այս մարդէն որ անուանի է իր սկզբունքի ճշգրտութեան, հաստիչ հանձարին, նորօրինակ ընթացքին կողմէ, քան իրական ազգային ծառայութեանցը համար:»

Ուրիշ տեղ մըն ալ. «Եղական մարդ է Եանսիւնուր եւ անյողողող սկզբունք, ազամանդի պէս սիրտ, երկասյրի սուրի պէս լեզու ունի, երբ այս լեզուն չառենախօսեր այլ կ'պատճառարանէ:

Այն օրն՝ ուր Նիկողոս Պալեան մեռաւ, Ռուսինեան կորսնցուց իր մեծագոյն բարեկամն ու թեւթիկունքը՝ Բարիզի մէջ ուսում առած, խելացի եւ աշխատող, Նիկողոս Պալեան, որ 1858 ին մեռաւ 34 տարեկան, իր ժամանակի ամէնէն փայլուն իմացականութիւններէն մին էր :

Ռուսինեան իր բարեկամին անակնկալ մահէն պակուցեալ մնաց . այս անգամ իր անխռով հոգին խռովեցաւ եւ տաքը տաքին՝ այս սրտի կսկծին ազդեցութեամբ՝ զրած է սա զեղեցիկ ձօնը, որ 1858 Մարտի 8 (Սարս) թուականը կը կրէ եւ որ Ուղղափառութեան երկրորդ տարգրութեան ճակատը պիտի զարգարէր :

Ի յիշարահ

Ռուսինեան Պէյէ

Նիկողոս Պալեան

« Վա՛հ . . . երբ իր ներողամիտ մտերմութիւնն ինձ քաջալեր արդէն իմ նախափորձ երկրոյս մէջ՝ կ'աճապարէր յ'երկրորդս այս տիպ , եւ երբ ինք խանդավառ հաղորդ զիս կ'ընէր զեղատառից ու զեղարուեստից վրայ իր իմաստասիրական խորհրդածութեանց, ուր կը տեսնէր զիւր փառքն ու երանութիւնը, եւ՝ մտայառ իր չնաշխարհիկ բարբառին, կ'անդիտէի՝ թէ այնքան շուտ կենաց յեզր կը մատչէր նա , ամենայն ինչ յինքն իսկ ինծի անմահ կը թուէր իր խօսքէրուն ու գործքէրուն պէ՛ս . . . »

Բայց Նիկողոս Պալեան իրեն արժանի յաջորդ մը , իր կրտսեր եղբայրը, Յակոբ Պալեանը կը թողուր եւ Ռուսինեանի կեանքին ամենէն երանելի ժամանակներն էին գուցէ այն օրերը, երբ Օրթաքէօյ անոր ծովեզերեայ տունն անկիւնակալ կը բազմէր ամէն տեսակ բառարաններէ չրջադառնալ թո՛ղ Ծերենց նկարէ մեզ այդ պատկերը :

« Հո՛ն ամեն տեսակ բառք ամեն տեսակ նիւթի համար կը փնտռուէին, կը յուզուէին, կը հնարուէին, թէ ուսումնական թէ գիտնական թէ ընտանեկան Ոչինչ չէր մոռցուէր, ինչ որ գաղղիարէն եւ տաճկերէն գործածական լեզուներն ինքնաբերաբար հնարած էին առանց աշխատութեան , հոն մտաւորական ճիգը զանոնք ստեղծելու կ'աշխատէր : Տէպը, աւէն, կուր, սաւառ, պուր, քիւրմար, եւ ուրիշ հազար բառեր, ա-

ղէկ ու գէշ, պիտանի եւ անպէտ, մտաւորական երկանց եւ վիճարանութեանց արգասիքն էին : Հոն տանտէրը Բերայի շողշողուն պերճանքը՝ մեծածախ կոշուքներն ու նուագահանդէսները թողած , ուսմունք եւ բարեգործութիւն միութարուութիւն բրած անձին, զպրօցի՝ թաարոնի՝ յաարանի՝ պանդուխտ ուսումնատենչ երիտասարդութեան ձեռնառու կը լինէր իր առատաձեռնութեամբ . իր մատենադարանը ժողովատեղի մ'էր ամեն անոնց որ տեղեկութիւն կը փնտրուէին : Հոն ընդարձակ գրասեղանի մը ծայրը նստած էր շատ անգամ Ռուսինեան իւր խորհրդականը՝ նաեւ մէնտօրը գրական մասին եւ կերակրոյ սեղանոյն, վասն զի այս ուսումնական կեանքին հետ այս Ստոյիկեանք պիտէին զնայիկուր ալ ընկերացընել եւ ինքզինքնին փոփոխէր կ'անուանէին ու կը հռչակէին : Հոն, այն գրասեղանին վրայ գրաբար եւ աշխարհաբար բառերն անհետացան . հայերէն կար՝ նախնի լեզուն, արմեներէն կար՝ արդի լեզուն : Արմեներէն լեզուի ակադեմիա մը հիմնելու խորհուրդը կը յեղյեղուէր, ամեն բան յօրինուած եւ կշռուած էր, կանոնները , դասակարգութիւնքը , անգամոց թիւը, իրեն ձայն օրագրի մը հիմնարկութիւնը՝ մեծութեան չափովը՝ սիւնակներուն թուովը : »

* * *

Ժողովի մէջ Ռուսինեան շատ չէր խօսեր , բայց լաւ կը խօսէր , « իր մէն մի ատեն նախնութիւնը եղելութիւն մը կ'ըլլար » : Անոնք որ իր բեմական կարողութեան վրայ գաղափար մ'առնուլ կ'ուզեն , թող կարգան 1870 Սեպտեմբեր 25 ի տառնագրութեան մէջ Սոյ կաթողիկոսութեան խնդրին վրայ իր ընդարձակ ատենադանութիւնն՝ ուր կ'երեւայ իր միշտ տրամաբան եւ յաճախ պերճախօս ոճը : Սա կտորը թող ներուի ինձ օրինակել հոս .

« Ես չ'եմ սիրեր ամենեւին ո՛չ զոք խնդալու իմ կողմս քաշել . նախ՝ կողմ չ'ունիմ , եթէ կողմ մը կայ, անի ինծի համար՝ իրաւանց կողմն է , եւ ամենուն հետ ի՛մ ալ յայն կողմը համիլ է փափաքս . ամենայն ճանապարհ որ հոն կը տանի՝ բարի է ինծի համար .

առանց կրից որպէս առանց նախապաշարման, ես ամենուն հետ կը քայլեմ. ամենուն ալ ցուցած ճանապարհէն կ'երթամ՝ ցուցնողին առաջնորդութեամբը եւ անոր ձեռքէն սիրով բռնած. ճանապարհին խոչընդոտները մէկզի ընելու, զժողովութեանց յաղթելու՝ ես ալ իմ կողմէն կ'օգնեմ ըստ կարի, զայս երկն ալ մինակ անոր չ'եմ ձգեր. եւ չ'եմ ձգեր զայն ձեռքը զոր մէջ մը բռնեցի՝ մինչեւ որ ցանկացեալ նպատակին չը հասնինք մէկ տեղ. Եթէ հասնինք, եթէ կրցանք իրաւանց տաճարին դռները ձեռք առնուլ, կը մտնենք, եւ հոն՝ ես կը խոնարհիմ արդարութեան երկրպագելի պատկերին եւ անոր լուսապայծառ տեսլանին առջեւ, եւ զիս հոն տանող ձեռքը ջերմեռանդ սրտիւ՝ կը համբուրեմ. Իսկ եթէ՝ Աստուած չ'ընէ, ահա զպողոտայի մը մէջ ընկնինք, զլուսնիս ապառաժի գայ կամ ոտքերնիս խորխորատի մը բերան, եւ ա'լ ճար չ'ըլլայ անդին անցնելու, ես իմ ուղեկիցս հոն՝ այն դժնեայ յուսահատուր վիճակին մէջ չ'եմ կրնար լքենել, նորէն ձեռքէն բռնած՝ ես դառնալ կը յորդորեմ եւ մէկ անգամ ալ իմ ճանապարհս փորձել կ'ազաչեմ : »

Այս թուականին ատենադպիր էր Ռուսինեան եւ ատենելու է թէ՛ ինչպէս կ'օհած, չ'տրած է ամենուն խօսածը. բովանդակ ատենագրութիւններէն մէջ մէկ տառախալ չ'կայ : Իր այդ պաշտօնին ատենն է որ, անգամ մը, ամբողջ ատենագրութիւն մը կրկին տպագրել տուած է երկու բուլթի սխալի համար

Օր մը Յակոբ Պալեանի՝ հրաժարականը կը կարդացուի ժողովին մէջ. Ռուսինեան կը յուզուի, այդ անունը Նիկողոս Պալեանը կը յիշեցնէ իրեն ու կ'ելլէ ճառ մը կը խօսի, պերճախօս ճառ մը, յիշատակներէ ներչեալ : «Արդ զիտէ՞ք, զիտցէ՞ք ուրեմն, էֆէնտիներ, այն անմահ բարերարը՝ այսօր այդ հրաժարականը ձեզի զրկող, նոյն անունը կրող, այդ ատորագրութեան տիրոջը երիցագոյն եղբայրն է, Նիկողոս Պալեան, յաւերժական կսկի՞՞ծ համայն ազգայնոց . . . : Տասներկու տարի է որ կորոյս Աղզը իւր այս դաւաղը, այս ազնիւ բարեկամը, որոյ սրտակից մտերմութեամբը պատուեալ՝ իւր մատաղ հասակէն անտի իւր խորհրդոց հա-

ղորդութեան մէջ ապրեցայ անսահման վրաստանութեամբ . . . չ'ողբացի՝ հերիք . . . երբէ՞ք չ'եմ կրցած՝ զայդ անունն արտասանել ատենց զգալու հեղձեալ արտասուաց ցուրտ քանի մը չիթեր, որք կ'ընկնին լըռիկ ի խորս սրտիս, ուր պաղեալ մի զմիտով՝ քարայրեալ ժայռացեալ կան այսօր . . . չիթ մալ պահւած էր կ'երեւայ՝ այսօր հոս այս ժողովին մէջ խնայուաւ : »

Ռուսինեան յանկարծարան չէր. իր խօսելիքը երկար բարակ կը պատրաստէր, կը զրէր, կ'աւրէր, բայց վերջապէս բան մը մէջ տեղ կը հանէր. թէեւ պէտք է խօստովանինք, կամ մանաւանդ ինք պէտք է խօստովանի որ այդ ճառերուն մէջ՝ տեղ տեղ՝ Վ. Հիւկօ իր կախարդիչ թեւադրանքն ի գործ կը դնէր, աննշմարելի եւ երբեմն ալ խիստ նշմարելի կերպով :

Կ'արժէ որ ատենագրութիւններուն մէջէն ժողովուն ու զատ տպագրութիւն այն մէկ քանի ատենախօսներու ճառերն որոնք մեր բնմին փայլն եղած են եւ որոնց մէջ զլիսաւորներէն են Ռուսինեանի խօսածները :

* * *

Ռուսինեան իր կեանքի վերջին տարիներուն ա'լ բոլորովին զրահանութեան յարեցաւ, որ փչրուած յոյսերու եւ դժգոհ հոգիներու մեծ ամոքիչն է. քանզի Ռուսինեանի յոյսերն ալ փչրուեցան ու ինքն ալ դժգոհ՝ մինչեւ իսկ զժրախտ ապրեցաւ, ամէն անոնց նման որոնք պէտք եղած ժամանակէն առաջ ծնած են :

Մահէն երեք տարի առաջ թարգմանեց Վ. Հիւկոյի Ռէ-Պլան, աննման թարգմանութիւն, զոր չ'եմ գիտեր ինչո՞ւ խժայուր կը կոչէ Օտեանա Խժայու՛ւր. խեղճ Ռուսինեան, իր ամենէ աւելի խորշած բանը իրեն վերագրի իր մէկ աշխատութեան : Ըստ բախտի կը բանամ էջ մը այդ թարգմանութենէն. Ռիւ պլասի նամակն է, Տիկնոջ զրած :

Տէկին, ոտնուդ տակ մեւթ տեղ մարդ մը կայ
Որ ձեզ կը սերէ՝ ի խոր գեղերի
Կորեալ ընթացեալ, որ կը շարժըրվի՝
Ձեռուն գետնամած աստղի մ'սիրահար.
Թէ ուղվի՞ հոգին կուտայ ձեզ համար.
Եւ ինք հոս վարը գայ մարիկ մարիկ
Երբ դուք հող վերը փայլ ի փայլ վառեք :

Եթէ Քոռնէյլ ու Ռասին իրենց արժանի թարգմանն ունեցած են մեր մէջ Հիւրմիւզով եւ Բագրատունիով, Վ. Հիւկոյ Ռուսինեանէ լաւագոյնը չէ ունեցած : Անշուշտ խժաւուր թարգմանութիւններ կան հայերէն, նոյն իսկ Ֆրանսացի մեծ գրագէտին գործերէն, բայց երբե՛ք Ռէ-Պլանի թարգմանութիւնը խժաւուր չէ . ընդհակառակը տիրող յատկութիւնն է ներգաշակութիւն :

* * *

Ռուսինեան կեանքն անցուց հանրութեան ծառայելով, եւ խեղճ ու աղքատ ապրեցաւ : Բժշկութիւնը գրեթէ նիւթական օգուտ մը չէ ունեցած իրեն համար . ետքի տարիները մանաւանդ նեղութիւնը սկսաւ մօտենալ չքաւորութեան, այն ժամանակ իր մտերիմներէն մէկին պաշտպանութեամբ փրկիստփայութեան դասախօսի պաշտօնն առաւ Կայսերական վարժարանի մը մէջ . Անմիջապէս ձեռնարկեց իր դասախօսութիւնները դիրքի մը մէջ ամփոփելու, որպէս զի տպագրել տայ Նրկու ամիսի չափ չարաչար աշխատեցաւ ասոր համար, այդ աշխատութիւնն աղետալի հետեւանք մը ունեցաւ իր արդէն տկարացած առողջութեան վրայ, Այս

վերջին գործն աւարտելէ քանի մը օր ետքը Ռուսինեան մեռաւ, 1876 Նոյեմբեր 29 ին :

* * *

Երեքշաբթի օր մըն էր, կը յիշեմ զեռայս օրուան պէս, իրիկունը՝ երբ հօբարս եկաւ, զիմացը վազեցի եւ մանկական անփութութեամբ ու անգթութեամբ, հակառակ հօքրիկներուս պատուէրին, գոչեցի, իբրեւ թէ աւետիս մը ըլլար տուածս :

— Գիտե՛ս, հօբար, Ռուսինեանը մեռեր է :

Ձէ՛, չէր դիտեր. եւ երբ քիչ մը ետքը քովը գացի, տեսայ որ Օտեան կուլար, Անձայն, անշուշտ լաց մը . ջղային տկարութենէ աւելի յիշատակներու զօրութեան արդիւնք : Եւ մտածումներէ գոյացած այս արցունքները յուշիկ զգուշիկ վար կը գըլտորէին այտերէն :

Հետեւեալ օրը թաղեցին Ռուսինեանը Յէրի-Քէօյի գերեզմանատան մէջ . չեմ գիտեր թէ ո՛ր կողմը կը գտնուի իր փոսը եւ քիչ մըն ալ անկարելի է գտնել, որովհետեւ քար չկայ վրան :

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ՆՈՃԵԱՅ ԱՆՏԱՌՆ

Հորիզոնին վրայ ընդարձակ անտառ

Տարածուի մերթին ու խաղաղեցիկ .

Նոնեաց անտառն է երկնից ռակ պայծառ,

Մեռելոց քաղաք մեծ, սարսաղեցիկ :

Եւ ճնշեն ուժգին հովեր ամառան

Փռուոյ հոծ ամպեր յառուցանելով,

Որ պատեն կոծեն այդ մութ բնակարան,

Որպէս մառախուղ մերկեն սեւ սեւ ծով :

Հովին հեծմանց մէջ, երկնից շողին շալ,
Քայներուն մէջեղ խռոված բընութեան,
Հողն իրենց վերմալ, հողն իրենց յառալ,
Հանգչին մեռելներն անդորր յաւիտեան:

Եւ որպէս, մարտէն յետոյ, խոնջ զինուոր,
Քար մը քարձ առած, հանգի՛սս դըժընդալ,
Իր վերադուին շալ, լուռ, սրգաւոր,
Պառկի աստղերուն լուրջ նայուածքին շալ:

Դարուց սերունդին քանակն անկենդան,
Յետ դառն այս մարտին զոր կեանք կ'անուանեն,
Այդ անհաւին շալ, վերմալ սկայալեան,
Հանգչի ահաւոր իր խոնջութենէն:

3 Սեպտ. 92.

Յ. ՍԵԹԵԼԸՆ

ՄՇՈՒՇԻՆ ՄԷՋ

... Կզգիներու շողենաւն իր ճամբուն
կէսն հասած է, եւ հեռուէն Պոլիսը, մշու-
լին մէջէն, կը գուշակուի աւելի քան կ'ե-
րեւայ:

Ինչ որ ամենէն առաջ կը տեսնուի,
մութ գորշ երկայն խաւ մըն է որ հորիզոնին
վրայ կը պառկի տարածուած, վիթխարի
մոխրագոյն օձի մը պէս որ ծովին վրայ
ուղիղ փռեր է իր մարմնոյն անհուն խողո-
վակը, ստուերի հաստ ժապաւէն մը, որ վե-
րէն կ'անջատուի՝ յստակ գիծով մը՝ երկնքին
մաքուր պայծառ ձերմակէն, եւ որ վարէն
ծովին կը խառնուի, իր ետեւ, ինչպէս հը-
մայական քօղի մը ետեւ, ծածկելով Պոլիսը:
Եւ այդ գորշութեան վրայ որոշ կը նկարուին
առագաստ մը կամ թռչուն մը, խուսափուկ
ձերմակութիւններ որք արծաթի ցլք մը
կ'առնեն առտուան ջրնջ լոյսին մէջ, իրենց
շուշանաթոյր բիծովն արատելով մթին այն
յատակը:

... Շողենաւը կը յառաջանայ. եւ տակաւ
այդ թանձր պատը որ կ'երկարի երկնքին
վրայ, թափանցկութիւն կը ստանայ, երազա-
լին թափանցկութիւն մը որուն մէջէն քանի
մը նրբին գողգոջուն գիծեր երեւան կ'ելլեն,
սլացիկ ձերմակութեամբ մը. մինարէներն են:
Եւ քանի կը մօտենանք, կը բազմա-
պատկուին այդ գիծերն, աւելի յստակ ձեւ
կ'առնեն, տեղ տեղ մութ կոյտեր դուրս
կը ցատքեն ընդհանուր տարտամութենէն,
կոյտեր որք շէնքեր կը յիշեցնեն, գոյնի
ուրուականներով. քիչ մըն ալ, եւ
ահա մզկիթներ կ'ըլլան անոնք, իրենց
գմբէթներն ուռեցնելով, այդ պաղած մութի
երկայն ալիքին մէջ որ առկալ կը մնայ օ-
ղին մէջ: Հիմայ կը սկսինք անուններ
տալ: Ահաւասիկ Թարքաբուի Պալատը
որուն բազմաթիւ ծխնելոյզներն ատամնե-
րու սլէս կը ցցուին. աւելի խորը, Հնու-
թեանց Թանգարանն իր գմբէթը կը կանգնէ.
հոս Սուլթան Ահմէտի մզկիթն է իր վեց մի-
նարէներով, ու հոն Այա-Սոֆիան իր չորս
մինարէներով, ձերմակ նրբին երկայն մատեր
որք երկինքը ցոյց կուտան: Գիծերէն

յետոյ գոյններն են որ կ'որոշուին, հողի պոտոր դեղնութիւններ, պարիսպի աղտոտ ճերմակութիւններ, ծառի մութ կանաչութիւններ, խառնիխուռն, խելագարած նրկարչի մը աներեւոյթ վրձինէն ելլելով կարծես, որ ներկերը կունտ կունտ կը թափէ գորշ կաւին վրայ, անհասկանալի խօլանկար մը երեւան հանելով: Ամենէն վերջը, մոխրագոյն խառնակոյտ մըն է որ կ'երեւայ, տուներու ամբողջ, անորոշ դեռ, ստուերի մէջ թաթխուած, տարտամութեան մէջ ընկուզուած, չըջագիծներն հալած, չըջապատող մթնոլորտին խառնուած, նրբացած, կակուղցած, թափանցկացած, փոշիէ գիծերու պէս զորս հով մը պիտի ցրուէ գոգցես, ու իրականէն աւելի հեռու երեւալով, ուրիշ աշխարհէ մը, երկնքին մէջ աւելի քան երկրի վրայ, անմատչելի, անգոյ, դիւթական քաղաք մը, որ ծովէն կ'ելլէ կամ երկնքէն կ'իջնէ, եւ որ պիտի ցնդի երբ մօտենաս:

... Եւ անխմատ փափաք մը կուգայ ինծի մօտնալ անուններն այդ շէնքերուն, ամէն ծանօթութիւն խզել անոնց հետ, ու պահ մը ենթադրել որ ատիկա մեր հանապազօրեայ ընակավայրը չէ, ուր կը քաշկռտենք մեր ռամիկ կեանքին բեռը, այլ երազի աշխարհ մը, ուր դեռ չէ կոխած մահահանապուի մը ոտքը, ուր գետինն ամպէ է, ուր տուները շղարչէ են, ուր օդը խոնկի մուխէ է, եւ ուր պարիկներ, թափանցիկ մարմինով, իրենց կարմիր կապոյտ պատմաճանին ծխածանումը կը ծածանեն ճերմակ ստուերներու մէջ...

... Բայց մօտեցած ենք, ու ա'լ կարելի չէ երազել. ճիշտ առջեւն ենք Պոլիսին: Եթէ այս մերձաւորութեան մէջ, մեր մօքէն կը թռչին անուրջները, դեռ անուրջէ բան մը մնայ քաղաքին վրայ: Հիմայ մէջն ենք մշուշին, օդային ծով ուր կ'ընկղմինք, եւ այդ թանձր կապարագոյն փոշիի անշարժ անձրեւին մէջէն որ մթնոլորտը կը լեցնէ, մաս մը միայն կը տեսնենք ցամաքէն, պղտիկ կտոր մը մեղի մօտ, ու անկից զատ, ամէն կողմ, ոչինչ, բացի սպիտակ անշաւունքներէն որք մեծ մեծ զանգուածներով կը ծածանին օդին մէջ, ամէն բան ծածկելով:

... Մեր աջ կողմը, մեր առջեւ, մեր ետեւ, պարապ մը գորշ ճերմակ. ու ինչ որ մեր ձախ կողմը կ'երեւայ, ցամաքի կտորը, քաղաքի այդ պատառը, դեռ ծուկներ ունի մոխրագոյն քօղէն՝ որք կը թռչնաին իր գէմքին վրայ, չպարի մը պէս փակած իր դիմագծերուն, ծառերը, տուները, մզկիթները, պարիսպները, հողը, որք իրարու խառնուած, իրարու մէջ մտած, ամէնքը մէկ՝ այլանգակ անբնական խմոր մը ձեւացուցած՝ կ'երեւան, գորշ ստուերով մը չփուած են կարծես, մուխով ամբողջ ծեփուած:

... Ծոգենաւներ կ'անցնին մեր մօտէն, խոշոր սեւ զանգուած մը ձեւացնելով աղօտ ճերմակութեան վրայ, իրենց ծխնելոյղէն սիկառէթի մուխի գոյն թրջած կապոյտ մուխ մը հանելով, ու կ'երթան մեր ետեւ կամաց կամաց սուղիլ եւ հուսկ ապա կորսուիլ մշուշին մէջ, որ արեւին ճառագայթներէն հիմա թեթեւ դեղնութիւն մը առած է:

Նաւակներ կը սուրան ծովուն վրայ որուն կապոյտը մղտացած է. եւ մարդերն որք անոնց մէջ կ'անցնին, ստուերներ կը թռնին որք կը սահին ստուերի այդ տիրապետութեան մէջ:

... Մեծ շոգենաւներ կ'երեւան, հետզհետէ դուրս ելլելով մշուշին ծոցէն, տեղ տեղ մենաւոր, տեղ տեղ խմբովին, հոս ամբողջ երեւալով, հոն մատամբ. եւ կարծես աւերակներ են ցրուցան՝ այրած անհուն շէնքի մը, որք դեռ կը ցցուին հոս ու հոն. քանի մը ծխնելոյղ այստեղ, քանի մը կայմեր անդին, ցուկներու շարք մը քիչ մը հեռուն, այնտեղ ամփոփուած առագաստներ, անդին կազմածքի, չուաններու խառնամառնում մը, գիծերու, արաաներու, դանգուածներու այլանդակ եւ քմահաճ իրարանցում մը, տեսակ մը հակայ սարդի ոստան, ծուխի ծուխի եղած, որուն պատառներն հոս հոն կը կախուին, ամբողջութիւնը կազմելով խօլական պատկեր մը զոր աղու ձեւք մը խաղալու համար շիներ է, չինական մեղանով կոշտ, ծուռ մուռ, անկանոն եւ անխմատ գիծեր քաշելով վեր ու վար, մէջէ մէջ:

... Վերջապէս, կամուրջը կ'երեւայ, երկայն սեւ գիծը որուն վրայ կը խլրտան միջնային եռուղեռումով մը բիւր բիւր սեւ պղտիկ կէտեր: Այլ վերջնական վճռական քայքայումն է երազին, անդիմադրելի անձնատուրթիւնը հեգնոտ իրականութեան: Շղարշ, խոհակ, պատկեր, թափանցիկութիւն, օդային քաղաք, ամէնքը թռած գացած են. ու մեր զիմացն են ահա մեր ամէնօրուան կոխած հողը, մեր ամէնօրուան ապրած կեանքը, նոյնն ինչպէս էին երէկ եւ ինչպէս պիտի ըլլան վաղը:

... Եւ ոտքս նաւամատոյցին վրայ դրած ատեն, կը խորհիմ մշուշէ աննիւթեան շոգենաւի մը, որ մշուշէ ծովի մը վրայէն զիս իրօք տանէր մշուշէ քաղաք մը ուր ապրէի մշտային էակներու հետ, մշուշէ կեանքի մը մէջ...

20 Սեպտ. 92.

Քընալը

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ

ՄԵՐ ՀՈՐԻԶՈՆԻՆ ՎՐԱՅ

— ՄԵՐ ԶԱՆՈՎ, կ'իմանա՞նք որ Մրուանձեանց Գարեգին Եպիսկոպոսի հիշանդութիւնը գիւնը Ազգային Հիշանդանոց փոխադրելու ջափ աւելցած է: Գեր. Մրուանձեանց մեր գրականութեան մեջ յատուկ տեղ մը ստեղծած է համակ կեանքով շեղուն, սեռ մը որուն մեջ գերազանցող չի պիտի ունենայ: Ուր որ աշխարհայ ու որչափ աշխատանք առանձին մնայ, ըստ իմ ամենուս «Թողի՛ք զիս այս տեղ», ո՛չ, չի պիտի թողունք գիւնը. մեր ամենեւնի ջերմ ու անկեղծ մտքանկերը իր շուտափոյթ ապափիւնութեանը համար, պիտի հետեւին իրեն:

— ԱՆԳԼԻՍՏԻ ԾԱՆՈՐ ՀԱՅԱՊԵՏՐ, Պ. Շոռլոմ, նախկին մը գրելով Մ...-ի Խնդրագրութեան կ'իմացնէր թէ Արեւելագիտաց Ժողովն իր առաջարկութեանը վրայ, հաւանք է որ կազմուի Միջազգային Ընկերութիւն մը հայ ուսումնասիրութեան յառաջացման համար (Société Internationale

pour l'avancement des études arméniennes): Այդ տեսակ միջազգային Ակումբի մը կազմութիւնը մեծապէս կրնայ դիտարկել աներկբայ եւրոպացի հայագետներուն ուսումնասիրութիւններն հայ հնախօսութեան եւ հայ շեղունի վրայ:

— ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՐ, որ Վառապայ Վանքի վանահայր եղած Ժամանակ երկրագործական վարժարան մըն ալ հիմնած է, յատուկ հոգածութիւն ունի մեր գաւառացիներու երկրագործութեան զարգացման համար: Իր պատշաճ տեղը, Պալէկ Եւ Թաւշէկ, պիտի պարունակէ ոչ միայն երկրագործական օգտակար դասեր գիւղացի մանուկին համար, այլ եւ ֆալիսիսին ալ առջեւ պիտի պարգէ հայ մշակին կենցաղը, որուն ընտելացած է հեղինակին իր մանկութեան ասէն:

— Պ. ՀԱՅԱՐԱՍ ԱՂԱՅԵԱՆԻ մեկ նոր տեսակը ստացանք, Մեր Ուսումնական Ընկերութեան Նախագահ: Պ. Աղայեանց կ'ուսումնասիրէ այդ աշխատութեան մեջ թէ ո՛ր տարրերը հայ աշխատանքին մեջ աւելցուած են Մեարմնի յետոյ: Ռուսահայ գրագետը հայ բանասերներու կը ծանօթացունէ նաեւ իր մեկ գիւնը, որ շահեկան է. Շուշանիկ, հայ սրբունիկ, քաղուած է եղեր Երուսաղէմ եւ ո՛չ Թիֆլիզի մօտ, ինչպէս կը կարծուէր միւսին հիշատակը:

— ՏԱՐԵՆԻ ՎԱՆԴԵՐ, զոր անցեալ տարի Լեօ աշխատանքի խանդակաբ տղերով կը նկարագրէր, անոր հիմնաւոր խաղաղութեան համար գործելով մօտաւոր ֆալիսիս, նորոգութեան վրայ է: Այդ պատշաճ վանքի մեջ, որ Սիւնեաց վարդապետանոցն էր եւ որ աշխատանք մեծ դեր կ'ստարարէր մեր նախահայրերու կրօնական ու գրական կեանքին համար, պիտի կառուցուի նաեւ նոր դպրոց մը, շրջակայ հայ գիւղացիներու կրթութեան յաւանգարում:

— ԲԱՆԻՍԻ Տեր Ղեւոնդ ֆահմանակալ էր անորից եւրոպական ճանապարհներու ծանօթ երաժիշտ Կարա-Մուրզայեան, որպէսզի Բագուի հայ եկեղեցիին համար կազմէ ֆառաձայն երգեցիկ խումբ մը, որ պիտի երգէ եկեղեցիին մեջ հանդիսաւոր օրերը: Եւրոպական երաժշտութիւնը մի՛ գոռիկ նրբացնելով եղծանէ հայ եկեղեցա-

կան երաժշտութեան ինֆլանսիս պարզութիւնը :

— **ՄԵՍՐՈՊ ԴՈՒՊԱՐԵԱՆ**, համակրեղի գրագէտը, որ իր վերջին ուղեւորութեանն առթիւ այնքան շուրջ սպասորդութիւնը քողարկեց Պոլսոյ մէջ բոլոր զինքն ճանաչողներուն վրայ, իր ֆրանսահայ բառարանին գինը կէս առ կէս իջեցուցած է : Այս փոփոխութիւնը որ այնքան դիւրամտացեղի կ'ընէ դպրոցականի զիստոր գործիքներէն մէկը, ապստոխայեալ պիտի ծայանոր այն ժողովրդականութիւնը որուն արժանի է :

— **ԿՈՒՐԿԵՅԻ ՀԱՅ ԵՐԻՏՐԱՍԱՐԳ ՄԷ**, Վահան Էփենտի Բիւրճեան, ձեռնարկած ըրշապով **ՀԻՄՆԱՆԻ ԱՊՏԱՅ ՀԱՄԱՐԻ** մը հրատարակութեան, հրատարակ հանեց իր երկին **Ա. Հասորը**, **Արեւելեան Հին Գրականութիւն** : Այնքապի Վարդանեան ընկերութեան հետեւ եւ գործունէակիւն ճօշկեր, որ միջոց մըն ալ խմբագիր եղած է **ՄԵՐԻՔԻ**, հիմալ վաճառականութիւն կ'ընէ, բայց այդ չարգիւր որ զբաղի նաեւ պատմական եւ գրական ուսումնասիրութիւններով : Իր հրատարակած գործը բուսականներու եւ դեղատեղիներէն հետ, հակիրճ աւանդելով նաեւ մարդկային ազգի փառաբանութեան պատմութիւնը, օգտակար աշխատութիւն մըն է, աւելն կերպով արժանի մեր վարժարաններուն մէջ տարածուելու :

— **ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԵԱՄԱՐ** ստացանք Մեղիսեղի Եպիս. Մուրաշեանցի իր վերջին գործը, **ՀԻՄՆԱՆԻ ԱՊՏԱՅ ՀԱՄԱՐԻ** : Երկուն տեղեկեցականին այս երկը, պատմական եւ աւստաւաբանական շուրջ ուսումնասիրութեանց արդիւնք, ինաստից, հոն եւ համեղ ոճով մը ծայրէ ծայր, արժանի է. աւելնուն ընթերցման : Ուրախաւոր է որ երբ մեր գրագէտ կղերականներէն շատերը յոռիքին կը պահեն, **ԵՂԵՂԵՂԻ ՊՏԱՅ ՀԱՄԱՐԻ** հեղինակը գրական հրատարակի վրայ կ'երեւայ այնքան ստուար աշխատութեանը մը :

— **ՊԱՐՈՆԵԱՆԻ** այրիին համար Հայ-Ելեւի դրկումը նպաստներն հետգնէտէ կը բազմապատկուին : Ունեւոր երիտասարդներ, եւ մանաւանդ անոնցմէ աւելի, խանութպաններ իրենց յունան կը դնեն ընդհանուր հաւաքումին մէջ : Դպրոցներէն աւելն օր տեղացող գումարները շատ շուրջապար մը կ'ընեն մեր նորահաս սերունդին վրայ :

— **Պ. ՏԻԳՐԱՆ ԴԱԶԱՐԵԱՆՑ** իր **ՏՈՒՆԱՅԻՆ** պատկերագրող շաքարաբերքը, **ԱՂԵՒԵՐ** անասները եւ **ԱՆՆԱՆ** օրաբերքիկը, որ

կը հրատարակուին Թիֆլիզի մէջ, ծախսէ իր **ԱՐԷՐ** տարանին հետ 15000 ռուպլի փոխարէն, տարեկան 3000 ռուպլի ստանալու պայմանով : Գնողներն եւ երկու երիտասարդ եռանդուն ուսուցիչներ, **Պ. Պ. Լիւսիցեան** եւ **Միրզայեանց** : **Պ. Տիգրան Դաւաթեանց** իւր ըրշապով Երուսա կ'երթայ դարմանուելու համար :

— **Պ. ԱԻԵՏԻԲ ԱՐԱՍԵԱՆԵԱՆՑ** իր սեփականութիւնն եղող **ՄԱՐԷ** հանդէսը ծախսէ իր հարուստ ուսանալ վաճառականի մը, քեւ միջոց ինք խմբագիր կը մնայ այդ հրատարակութեան, ոռնիկ միայն ստանալով :

— **ՏԱՐԱՐ** իր վերջին քիւրեքն մեկուն մէջ կը հրատարակ Օրիորդ Լադաշիւ Տեր Մարկոսեան-Միրզաեանի պատկերը, իր մահուան տասնամեակին առթիւ : Գայիանեան ուսումնասիրանի վաղաւեռ ուսուցչուհին **ՀԵՐԱՐԵՂԻԿԱՆ ԵՂԵՂԻՆ** հիմնադիրներէն մէկն եւ այդ ընկերութեան հրատարակութեանց անդրանիկ քարգիւնիցն ըրշապով, մեծ դեր կատարած է Թիֆլիզի հայոց մէջ տարածելու համար մայրենի լեզուն :

— **ՏԻԼԻՆ ԱՆԵԱՍՄԵԼԻԲ ԵՍԿՈՐԵԱՆՑ** կը ծանուցանէ քիւրեքն հրատարակ պիտի հանէ իր անունին մէկ ընդարձակ անսիւս վեպը **ԶԱՆԴԱՐ**, ինչպէս նաեւ **ՎԵՂԵՂԻՆ** եւ **ՊԱՂԵՂԻՆ** : **Բ.** հասորը : Այս գործերու տպագրութիւնն յետագումը երբ յոյեանի պատճառով :

— **Յ. ԳՈՐԴԱՆԻ** Էփենտի ստացանք **ԱԶԻՐԵՂԻ ԳԻՆԱՆԻՆԻ ՊԱՂԵՂԻ Գ.** Մասը ուր յօդուած ունին Մեղիսեղի Արեւիկա-կոպու Մուրաշեանց, **Վ. Վ. Տ.** Միւսանեան, Վահան Գ. Մայեգեան, Մառի Գ. Պեղեքեան, Ենովք Թեյեան, Մարիամ Սեւեռեան, Մկրտիչ Զանգեան, Տօթոր Զ. Թիւրեքեան :

— **ԲԵՍՏԱՆՈՅԵՐԻ ԼԵՆԻՆԵՐԻ ԵՂԵՂԻՆ** վեպը, քարգիւնութեանը Խորեն Վարդապետ, Սեփակեի, հրատարակում է Պաղտատեան տարանին : Խրիկի հետեւ եւ պերճաւոր փարգիին այս աշխատասիրութեանն հաւաքը շատացում է Այնքապի Վարդանեան վարժարանին :

ՓՈՐՈՐԱԿ

ԱՐՏՈՆԱՏԵՐ

Ե. Պ. ՊԱՐԵԱՆ

ՓՈՐԱԳՐՈՂ ՍԵՐՅՈՅԵ

ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՂԵՂԻՆ

Կ. Պոլիս, Սուրբ Համալ Աղբիւրի հով.